1909 ԹՎԱԿԱՆԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԸՍՏ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Արամայիս Բալոյան

Ադանայի և Հալեպի նահանգների հայաբնակ շրջաններում 1909 թ. ապրիլին երիտթուրքական իշխանությունների կազմակերպած և իրականացրած կոտորածներին ականատես իտալացի դիվանագետներն, իրենց կառավարության հետ տարվող գրագրություններում անդրադառնալով այս խնդրին, արժեքավոր տեղեկություններ են հաղորդել տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին: Իտալական դիվանագիտական փաստաթղթերը, որոնք մինչ վերջին ժամանակները հիմնականում հասանելի չէին ուսումնասիրողների համար, այժմ շրջանառության մեջ են դրվում՝ հնարավորություն տալով խնդիրն առավել հանգամանորեն ուսումնասիրելու համար:

1909 թ. երիտթուրքական կառավարության կողմից Ադանայի և Հալեպի նահանգների հայկական շրջաններում իրականացրած կոտորածների խնդիրը, թեև բավական ուսումնասիրված է, գրվել են բազմաթիվ աշխատություններ, հրապարակվել և հայերեն թարգմանվել են այս խնդրին առնչվող եվրոպական մի շարք երկրների դիվանագիտական փաստաթղթեր, այդուամենայնիվ, ակնհայտ է, որ շատ նորություններ են դեռևս ի հայտ գալիս, որոնք նոր լույս են սփռում այս ժամանակաշրջանի վրա և հնարավորություն տալիս առավել հանգամանորեն ուսումնասիրություններ կատարել այդ ուղղությամբ:

Իտալական դիվանագիտական արխիվներում պահվող և Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերը մինչև վերջերս, որոշ բացառություններով, գրեթե անհայտ էին հանրությանը: Ահա հենց այդ փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 2005 թ. Իտալիայում ՀՀ դեսպանատան միջնորդությամբ հեղինակին հնարավորություն ընձեռնվեց ուսումնասիրություններ սկսել Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվում:

Այդ ուսումնասիրությունների արդյունքում կազմվեց Հայկական հարցին առնչվող Իտալիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փաստաթղթերի երկհատոր ժողովածու, որի առաջին հատորում տեղ են գտել 1913-1917 թթ. իրադարձություններին առնչվող 225, իսկ երկրորդ հատորում՝1918-1923 թթ. իրադարձություններին վերաբերող 241 փաստաթուղթ:[1]

Թեև ժողովածուի ամբողջական երկհատորյակն ընդգրկում է 1913-1923 թթ. փաստաթղթերը, այսուհանդերձ նպատակահարմար գտանք առաջին հատորի հավելվածում՝ ի նպաստ 1909 թ. Կիլիկիայի հայկական կոտորածների ուսումնասիրության, զետեղել նաև այդ իրադարձություններին առնչվող 20 փաստաթուղթ:

Ներկայացվող փաստաթղթերն ամբողջությամբ հանրությանն են ներկայացվում առաջին անգամ:

Ինչպես հայտնի է, 1909 թ. ապրիլին երիտթուրքական իշխանությունները կազմակերպեցին և հրահրեցին հայերի կոտորածներ Ադանայի և Հալեպի նահանգների հայաբնակ շրջաններում, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր: Դեպքերին ականատես եվրոպական, այդ թվում և իտալացի դիվանագետներն ահազանգել են իրենց կառավարություններին, որպեսզի դրանք միջոցներ ձեռնարկեն հայերի դեմ ուղղված բռնությունները

1 Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, 1913-1923, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հատոր Ա, 2008, Հատոր Բ, Երևան, 2010:

կասեցնելու համար: Այդ շրջանի իտալական դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ կոտորածներն ու բռնությունները չեն սահմանափակվել միայն վերոհիշյալ նահանգներով և ընդգրկել են Օսմանյան կայսրության այլ նահանգներ ևս: Հայկական ջարդերը՝ երիտթուրքական իշխանության կողմից կազմակերպված լինելու հանգամանքը ապացուցվում է հիշյալ դիվանագիտական վավերագրերից, որոնցում արձանագրվում է, որ քաղաքային իշխանություններն ու կանոնավոր զորքերն անմիջական մասնակցություն են ունեցել հայերի կոտորածներին և նրանց գույքի թալանմանն ու ավերմանը:

Եվ այսպես.

Դեռևս 1908 թ. հոկտեմբերի 29-ին Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Իմպերիալին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին ուղարկած հեռագրում գրում է. *«Պարոն նախարար, Պարոն Պալլավիչինին ինձ ցույց տվեց անցած կիրակի օրը Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի դեսպանատների ստացած մի հեռագիր, որով Սամսունի համապատասխան հյուպատոսները հայտնում էին քրդերի կողմից տեղի քրիստոնյա բնակչության բնաջնջման վտանգի մասին և խնդրում էին, որպեսզի դեսպանատները շտապ միջոցներ ձեռք առնեն արհավիրքից խուսափելու համար»:*[2]

Դեսպան Իմպերիալին իր այս հեռագրում տեղեկացնում է նաև, որ իր եվրոպացի գործընկերների հետ դիմել է Մեծ Վեզիրին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի արհավիրքը կանխելու համար: Հեռագրին կից Իտալիայի դեսպանն իր նախարարին է ուղարկել կաթոլիկ հայերի պատրիարքի կողմից հոկտեմբերի 18-ին իրեն ուղարկած նամակի կրկնօրինակը, որում կարդում ենք. *«Չնայած սահմանադրական կարգին, Վիրան քաղաքի խաղաղ բնակչությունը ենթարկվում է մարդկային զգացմունքներն անարգող բռնությունների: Բնակիչները թալանվում են, նրանց պատիվն անարգվում է: Զինվորական հրամանատարները օգնություն ցուցաբերելուց հրաժարվում են, որն էլ կեղեքիչներին առիթ է տալիս բռնություններն իրականացնել առավել բիրտ միջոցներով: Բնակչությունը, հանուն արդարության, կոչ է անում, որ հաշվի առնվեն այս փաստերն ու միջոցներ ձեռք առնվեն կարգ ու կանոնը վերահաստատելու և բռնազավթված գույքն իրենց տերերին վերադարձնելու ուղղությամբ»:*[3]

Երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ նրանք հանդես եկան Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների հավասարության, ազատության, իրավունքների և եղբայրության մասին կարգախոսներով, բազմաթիվ քրիստոնյաներ, այդ թվում և՝ հայերը, որոնք աբդուլհամիդյան վարչակարգի տարիներին հալածանքներից խույս տալու նպատակով լքել էին իրենց բնակավայրերը, հավատացին երիտթուրքերին և սկսեցին վերադառնալ՝ փորձելով օրենքի շրջանակներում տեր կանգնել իրենց ունեցվածքին և իրավունքներին: Սակայն հայերը ոչ միայն հանդիպում էին դժվարությունների, այլև՝ ենթարկվում էին նոր բռնությունների: Այդ մասին է վկայում Տրապիզոնում Իտալիայի արքայական հյուպատոսության տեղապահ Գուլիելմիի կողմից 1908 թ. նոյեմբերի 4-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին ուղարկած հեռագիրը, որում ասվում է. *«Պարոն նախարար, պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանն ուղարկելու Էրզրումից ստացված մի հեռագրից հատվածներ, որ ինձ է ուղարկել մի վստահելի անձնավորություն:*

Այստեղ ևս հայտնի են դարձել Դիարբեքիրի մոտ տեղի ունեցած դեպքերը, բայց դրանց

2 Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվ: Այսուհետ՝ ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h. LXVI, թիվ 551:

3 Նույն տեղում:

առնչությամբ վարկածները բավականին շատ են: Ոմանք ասում են, որ անկարգությունների պատճառը քուրդ Իբրահիմ փաշային բռնելու համար ուղարկված բաշիբոզուկներն են եղել: Մյուսներն ասում են, որ մահմեդական բնակչությունն է զինվորների օգնությամբ իրականացրել կոտորածները: Ամեն դեպքում զոհերի և վիրավորների քանակը շատ մեծ է, մահմեդականները թալանում, սպանում և անարգում են անզեն կանանց ու երեխաներին: Բացի այդ՝ իմ շրջայցի ժամանակ, երբ հյուրընկալվում էի քուրդ բեյերի մոտ, հասկացա, որ եղբայրության ու հավասարության գաղափարները տեղ չեն գտնում այդ բարբարոսների ուղեղներում: Սահմանադրությունն ու ազատության [գաղափարն] այդ քուրդ բեյերի համար բռնի ուժով ձեռք բերած [իրենց] իրավունքների կորուստ է նշանակում: Բնականաբար, նրանք չեն համակերպվում նոր համակարգին: Մյուս կողմից՝ գաղթական հայերն այժմ վերադառնում են հայրենիք [և,] գիտակցելով իրենց իրավունքները, փորձում են ետ վերցնել ժամանակին իրենցից խլված ունեցվածքը՝ հողերը, անասունները և այլն: Նախկին կառավարությունն այդ ունեցվածքն արդեն բաժանել էր Ռուսաստանից եկած մուհաջիրներին: Այժմ ինչ միջոցներով պետք է վերականգնվի արդարությունը: Սա ևս բավական մեծ և խրթին դժվարություն է: Ինչպե՞ս է հնարավոր խոսել խաղաղության և ներդաշնակության մասին, երբ տեղի բնակչության մեջ շահերի և մտածելակերպի մեջ այսքան տարբերություններ կան: ... Եթե Դիարբեքիրի դեպքերի մեղավորներին ըստ արժանավույնս չպատժեն, չպետք է զարմանալ նոր կոտորածների մասին լուրերից ...»:[4]

Իսկապես, նոր կոտորածների և բռնությունների մասին լուրերն իրենց երկար սպասել չտվեցին: Թեև, ինչպես գիտենք, Ադանայի և Հալեպի նահանգներում կոտորածները սկըսվել են 1909 թ. ապրիլի սկզբին, բայց Իտալիայի արտաքին գործերի նախարարության արխիվներում այդ օրերի վերաբերյալ գրագրություններն ու հեռագրերը չեն պահպանվել: Այդ դեպքերին առնչվող առաջին հեռագիրը թվագրվում է 1909 թ. ապրիլի 16-ով, որով Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Սֆորցան Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին տեղեկացնում է. «*Մերսինի մեր արքայական հյուպատոսական գործակալության տեղապահն երեկ ինձ է ուղարկել հետևյալ հաղորդագրությունը: «Երեկ երեկոյան Ադանայում սկսվել է հայերի կոտորածը: Զինվորականներն ի վիճակի չեն կանխելու արհավիրքը: Զինվորները սկսել են թալանել. իրավիճակը չափազանց ծանր է: Մեր հայրենակիցների կյանքն ու ունեցվածքը վտանգված են: Խնդրում եմ պաշտպանության համար շտապ մի ռազմանավ ուղարկել այստեղ...»:*[5]

Նույն օրը՝ ապրիլի 16-ին, Իտալիայի արտգործնախարար Տիտտոնիին երկու հեռագիր է ուղարկում նաև Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեուրեգարդը: Առաջին հեռագրում ասվում է. «*Ադանայում երեկվանից վերսկսված հայերի կոտորածների մասին այս գիշեր հեռագիր ստացա Մերսինից: ... Լուրեր են տարածվում, որ ողջ երկրում անկարգություններ են սկսվել: Այստեղի բնակչությունը սարսափահար վիճակում է: Այժմ գնում եմ գլխավոր կառավարչի մոտ՝ վիճակը շտկող ձեռնարկումներ պահանջելու»:*[6] Երկրորդ հեռագրում Բեուրեգարդը գրում է. «*... կոտորածներ են սկսվել նաև Ալեքսանդրիայի մոտակա գյուղերում, որոնցից երկուսը թալանվել ու հրի են մատնվել: Դորթյոլ գաղթած հայերը պաշտպանվում են: Իրավիճակը ծանր է: Ալեքսանդրիայի ողջ բնակչությունը ջղագրգիռ վիճակում է, իսկ իշխանությունները վստահ են, որ բավարար ուժ*

4 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.LXVI, թիվ 552:
5 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2399:
6 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2401:

ունեն վիճակը շտկելու համար»:[7] Վերսկսված այս կոտորածներն իրենց բնույթով տարբերվում էին նախորդ շրջանի կոտորածներից: Եթե նախկինում հալածանքների էր ենթարկվում հիմնականում կայսրության հայ բնակչությունը, ապա այժմ սպառնալիքի տակ էին բոլոր քրիստոնյաները, այդ թվում նաև՝ եվրոպահպատակները, որոնք Թուրքիայում էին գտնվում աշխատանքի բերումով: Դա է պատճառը, որ եվրոպական տերությունների անհանգստությունը և ձեռնարկած միջոցներն իրենց որակով տարբերվում էին նախկինում ձեռնարկած միջոցներից: Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Սֆորցան ապրիլի 17-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին գրած հեռագրում հայտնում է. *«Անգլիայի հյուպատոսը վիրավորվել է, իսկ գերմանական ընկերություններին մեծ վնաս է հասցվել: Անգլիայի դեսպանը, որը լիազորություն է ստացել օգտագործել Մալթայի նավերը, կարգադրել է, որ մի ռազմանավ մոտենա Մերսին քաղաքին: Գերմանիայի դեսպանն էլ կարգադրել է, որ Միջերկրականից մի հածանավ մտնի Դարդանել: Հաշվի առնելով ստեղծված վիճակը շտապ մի ռազմանավ էլ մենք պետք է մոտեցնենք Մերսինին»:*[8]

Հաջորդ օրը՝ ապրիլի 18-ին, Սֆորցան նախարար Տիտտոնիին է ուղարկում Մերսինում Իտալիայի հյուպատոսական գործակալությունից ստացված հեռագիրը, որում ասվում է. *«Արհավիրքը գնալով սաստկանում է, ազգային կյանքը վտանգված է: Անիշխանության պատճառով Ադանայի հետ միասին հրի ու արյան մեջ է նաև Տարսոնը: Անգլիայի հյուպատոսը, որ ուզում էր ստանձնել Ադանայի զինվորական հրամանատարությունը, վիրավորվել է: Անգլիացիներն իրենց համերկրացիներին պաշտպանելու համար մի ռազմանավ են ուղարկել: Մերսինի քաղաքապետը փորձում է բոլոր հնարավոր միջոցներով փրկել քաղաքը: Ադանայի և Տարսոնի հետ հաղորդակցությունն ընդհատվել է»:*[9]

Իսկ Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեուրեգարդը ապրիլի 20-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին հեռագրել է. *«Անտիոքում երեկ մեծ կոտորած է տեղի ունեցել: Անգլիայի հյուպատոսը հեռագրել է, որ վտանգի մեջ է գտնվում: Զեյթունում հեղափոխություն է սկսվել: Քիլիս քաղաքը սպառնալիքի տակ է: Քրդերն այստեղ են հասել, Հալեպը վտանգված է, իսկ քաղաքի վալին հայտարարում է, որ անհրաժեշտ միջոցներ չունի քաղաքի պաշտպանության համար: Եղած ուժերը գտնվում են քաղաքից դուրս՝ ներսում միայն մեկ գումարտակ է մնացել»:*[10] Բեուրեգարդը նույն օրը մեկ այլ հեռագիր է ուղարկել Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Սֆորցային, որը նույն օրն այդ հեռագիրն ուղարկել է Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին: Այդ հեռագրում ասվում է. *«Ադանայի քրիստոնյա իտալացիները սպառնալիքի տակ են, քաղաքից դուրս նրանցից շատերը սպանվել են: Տեղի իշխանությունների հանդեպ հավատ չունենք: Օսմանիեում 100 բողոքական քարոզիչներ այրվել են հենց եկեղեցու մեջ: Գլխավոր կառավարչին հղած մեր բողոքներն արդյունք չեն տալիս: Բոլոր քրիստոնյա հայերն անհետացել են Ադանայից և Անտիոքից: Շատ գյուղեր հրի ու սրի են մատնվել: Սովահար ընտանիքներն օգնություն են խնդրում»:*[11]

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքն օգնություն ստանալու ակնկալիքով, ապրիլի 19-ին այցելել է Կոստանդնուպոլսում գտնվող Իտալիայի դեսպանատուն: Այդ հանդիպման մասին դեսպանատան հանձնակատար Սֆորցան նախարար Տիտտոնիին ամսի

7 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2406:
8 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2412:
9 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2418:
10 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2453
11 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2514:

20-ին ուղարկած հեռագրում գրում է. *«Պարոն նախարար, Գրիգորյան [Առաքելական եկեղեցու հետևորդ] հայերի պատրիարքը երեկ եկել էր դեսպանատուն և ինձ ներկայացրեց Ադանայից և շրջակա բնակավայրերից ստացված հեռագրերը: Դրանցում խոսվում էր այրված և թալանված քաղաքների, ինչպես նաև՝ հալածանքների ենթարկված հայկական համայնքների մասին: Պատրիարքին պատասխանեցի, որ Մերսինի մեր արքայական հյուպատոսական գործակալությունից առաջին իսկ հեռագիրը ստանալուց հետո հանդիպել եմ Մեծ Վեզիրին, որին հասկացրել եմ, որ իրենց կառավարության պարտականությունն է շտապ միջոցներ ձեռնարկել, որպեսզի անհապաղ կասեցվեն արյունալի իրադարձությունները: ... Ավելացրեցի, որ մեր արքայական կառավարությունն արդեն մի ռազմանավ է ուղարկել, որը բացի մեր հայրենակիցներին պաշտպանելուց, անշուշտ, ամեն ինչ կանի, որպեսզի ուժեղացնի իշխանությունների պարտավորության զգացումը և բնակչության շրջանում վերականգնի վստահությունն ու հանդարտությունը»:*[12]

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատուն է այցելել նաև կաթոլիկ հայերի պատրիարքը: Այդ հանդիպման մասին Իտալիայի դեսպան Իմպերիալին մայիսի 5-ին հեռագրել է Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին. *«Կաթոլիկ հայերի պատրիարքն այս առավոտ եկավ ինձ մոտ և խնդրեց, որպեսզի Նորին Գերազանցություն թագավորին և նրա կառավարությանը փոխանցեմ իր բարձր և խորը հարգանքը՝ հայ փախստականներին արքայական «Պյեմոնտ» ռազմանավում տեղակայելու համար: Պատրիարքն ասաց, որ Ադանայում իրականացվող դաժանությունների ու բռնությունների վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ է ստացել»:*[13]

1909 թ. գարնանը տեղի ունեցած այս սարսափելի իրադարձությունների նկարագրության, դրանց իրական մեղավորների և կազմակերպիչների բացահայտման առումով չափազանց կարևոր նշանակություն ունի Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեուրեգարդի հեռագիրը, որը մայիսի 8-ին նա ուղարկել է Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին: Հաշվի առնելով հեռագրի կարևորությունը՝ նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել ամբողջությամբ.

«Պարոն նախարար, Մուհամեդ V-ի սուլթանական գահին գալուց հետո հյուպատոսական այս տարածքում կոտորածները դադարել են: Աստված տա, որ սա միայն հերթական դադարը չլինի: Ապրիլի 25-ից 28-ը խեղճ Ադանա քաղաքը դարձյալ սգում էր: Եվս 8 հազար զոհեր եղան, և այսպիսով 70 հազարանոց քաղաքում արդեն 25 հազար սպանվածներ կան:

Ճիզվիտների և ֆրանսիական կույսերի կրոնական շինությունները ավերվել են, սրի են քաշվել ոչ միայն այնտեղ ապաստան գտածները, այլ նաև որոշ ճիզվիտներ:

Արդեն այստեղի ջրերում էին գտնվում եվրոպական ռազմանավերը, երբ տեղի ունեցան Անտիոքի, Քասսաբի, Մարաշի և այլ շրջանների սպանդները: Ինչպես 1895-1896 թվականներին, մահմեդականները ծիծաղում էին ուժերի այս կուտակումների վրա և ծաղրում այլահավատ զինվորներին, որոնք եկել էին տեսնելու, թե ինչպես են կոտորվում իրենց կրոնակիցները:

Քրիստոնյաներին կոտորելու հրամանը կայսերական պալատից տեղի գլխավոր կառավարչին հասավ ապրիլի 14-ին թվագրված հեռագրով: Ամեն ինչ պատրաստ էր իրագործելու համար այդ հրեշավոր ծրագիրը: Բոլոր քրիստոնյաների տներին արդեն նշաններ էին արված:

Այդ ամենի մասին ես գիտեի, սակայն չէի համարձակվում բարձրաձայնել, քանզի հստակ ոչինչ հայտնի չէր: Տեղի վալին, որը հաստատապես հետադիմական է և միշտ

12 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2507:
13 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2580:

զսպված էր պահվում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հյուպատոսների, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների կողմից՝ անկարգությունները հրահրելու [իրեն ներկայացվող] մեղադրանքը մեղմելու համար, ստացված որոշումը ամսի 28-ին ներկայացրեց զինվորական հրամանատարներին և կոմիտեին անդամագրվելու ցանկություն հայտնեց, սակայն նրա խնդրանքը մերժվեց:

Վիլայեթի քաղաքական գործերի տնօրեն Նարմի բեյը, որ այժմ նույն պաշտոնն է զբաղեցնում Սալոնիկում, այլ անձանց ներկայությամբ երեք անգամ հաստատեց, որ նման հրահանգ է ստացվել:

Բեդվին ավազակախմբերը կազմ ու պատրաստ սպասում էին քաղաքի շրջակայքում: Հալեպում [այդ ծրագիրն իրականացնելու] համար քրդերը, որոնք ավելի շուտ գողեր են, քան՝ մարդասպաններ, չէին բավականացնում և այդ պատճառով բերեցին նաև անապատի վայրագ արաբներին, որոնք գերագույն հաճույք են ստանում արյան սարսափի մեջ:

Չպետք է մոռանալ, որ պալատի չորս գլխավոր էմիսարները ոչ միայն հրահրել են, այլև անմիջական մասնակցություն են ունեցել ջարդերին և ձերբակալվելուց հետո ազատ են արձակվել:

Խարբերդի մութաշարիֆ Առնուլլա բեյը, որն Անտիոքի կայմակամի և հասարակական կարծիքի կողմից պաշտոնապես մեղադրվում էր ոչ միայն կոտորածները կազմակերպելու այլ նաև՝ մարդասպանության և գողության համար, ազատ է արձակվել՝ իր հետ տանելով գողացված ձիերն ու կառքերը:

Ժանդարմերիայի կապիտան Սարիան աղան, որին բոլորը մեղադրում են բեդվին ցեղերին հավաքագրելու և դեպի Անտիոք ու Քեսաբ ուղղորդելու մեջ, դեռևս ազատ շրջում է Հալեպում:

Էլ չենք ասում Հալեպում ու Մարաշում անկարգություններ կազմակերպելու համար Կոստանդնուպոլսից ժամանած պաշտոնյա Մասսուդ բեյի և Ադանայի նողկալի կոմիսար Ներբի էֆենդու մասին:

Անտիոքում կոտորածների հրամանը տրվեց երեք օր առաջ՝ հենց այն օրը, երբ իշխանության ներկայացուցիչներն այստեղ էին եկել, որպեսզի քրիստոնյա բնակչությանն արգելեին փողոց դուրս գալ և բացել իրենց խանութները, քանզի այդպիսով ավելի հեշտ կլիներ կոտորել նրանց: 350 սպանված կա: Չեն խնայել նույնիսկ կանանց ու երեխաներին, կանանցից շատերն ինքնասպան էին լինում: Մարտիրոս էֆենդին, որը կառավարության քարտուղարն էր, իր կնոջն ու երեխաներին գտավ դաժանորեն սպանված: Հանցանքը կատարել էին իր գրասենյակի աշխատողները, որոնց հետ նա այնքան բարեհամբույր էր եղել: Վերջում նրան ևս մորթեցին:

Եպիսկոպոս Տեր Արսենը, որի նախ ականջները կտրեցին, հետո քիթն ու գլուխը, եկեղեցուց քարշ տրվեց մինչև ծով և ջուրը նետվեց:

Ադանայում, մի կնոջ ստիպեցին ուտել իր երեխայի միսը, ապա սպանեցին:

Բացում էին հղի կանանց որովայնը և պտուղը հանելով ցուցադրում էին քաղաքի փողոցներում:

Հատկապես ծանր էր ընտանիքների վիճակը: Ոտաբոբիկ կանայք և երեխաները սովահար շրջում էին քաղաքում՝ հուսալով մի կտոր հաց գտնել, սակայն դրա բացակայությունը բացատրվում էր երկրում ալյուրի բացակայությամբ:

1895-1896 թվականների կոտորածները սկսվեցին Բիթլիսից և տարածվեցին Դիարբեքիրում և Զեյթունում, որտեղից էլ՝ Էրզրումում, Վանում և Տրապիզոնում: Այդժամ կոտորածներին զոհ գնաց 300 հազար մարդ: Այժմ անհրաժեշտ էր ավարտին հասցնել սկսված գործը. հրաման էր տրվել կոտորելու Հայաստանի այս վերջին հատվածի քրիստոնյա բնակչությանը:

Այդ նողկալի ծրագիրը հնարավոր չեղավ լիովին իրագործել, և ոչ բոլորին հնարավոր եղավ վերացնել: Մուսուլմանները հակադրվում են նոր սուլթանին, որին անվանում են քրիստոնյաների մարդ: Հետադիմականները վառ են պահում դժգոհության ալիքը և երգեր

են ձոնում Իսլամի փայլուն ներկայացուցիչ ու անհավատների ահաբեկիչ Աբդուլ Համիդին:

Դորթյոլում, չնայած իշխանությունների պնդումներին, թուրքերի ու քրիստոնյաների հարաբերություններն այդքան էլ լարված չեն: Այս ամսվա 3-ին քաղաքի կառավարիչը տեղի հայ եպիսկոպոսից պահանջեց, որպեսզի նա կարգադրի հայերին վայր դնել զենքը, բայց նա, հաշվի առնելով անցյալի և ներկայի փորձը, նրան պատասխանել է, որ նման կարգադրություն չի կարող տալ, մինչև որ մահմեդականներն իրենք զենքը վայր չդնեն: Այդժամ Ռաշիդ բեյը կարգադրել է, որ 50 հեծյալներ և մոլեռանդների կես գումարտակ գնան և իրականացնեն զինաթափումը:

Այդ մասին անմիջապես տեղեկացրի մեր արքայական դեսպանատանը, իսկ Անգլիայի իմ գործընկերը զգուշացրեց Ալեքսանդրիայի մոտ գտնվող իրենց նավերին: Նորին Գերազանցություն Իմպերիալիի միջամտությունն անկասկած դրական արդյունք ունեցավ: Դորթյոլի գործերի հանձնակատարն իր ղեկավարի անունից ինձ տեղյակ պահեց, որ քաղաքը շրջափակման մեջ է, իսկ կառավարիչը հրահանգել է զինաթափել թե՛ քրիստոնյաներին և թե՛ մահմեդականներին: Բացի նրանից, որ մեր և ֆրանսիացի պաշտոնյաները կարողացան արգելել ներխուժումը քաղաք, այլև՝ մեր նավերից հրամանատարներ ուղարկվեցին՝ քաղաքի իրավիճակին ծանոթանալու համար:

Մուհամեդ բեյն ինձ ասաց, որ եթե երկարատև խաղաղություն ենք ուզում, ապա անհրաժեշտ է պատժամիջոցներ կիրառել: Բանակն, իրականում, ցանկանում է այդ ուղղությամբ գործել, սակայն, արդյո՞ք կկարողանա ճիշտ գործել: Աստված տա այդպես լինի, սակայն, հակառակ պարագայում, դարձյալ անտեղի արյուն կթափվի:

Կոստանդնուպոլսից ստացված հրահանգների համաձայն, Անտիոքում ձերբակալվել են գլխավոր մեղավորները, սակայն բնակչությունը պահանջում է, որպեսզի նրանց ազատ արձակեն, քանզի չի կարելի պատժել սուլթանի հրամանը կատարելու համար:

Գյուղերում և հատկապես Բեյլանում ու Մարաշում, քրիստոնյաները ջարդի են սպասում, իսկ Զեյթունի բնակիչները վախենում են, որ ուղարկված զորքը քաղաքում կիրագործի այն, ինչ՝ Ադանայում և Քեսաբում:

Ոչ մի քրիստոնյա չի կարողանում դուրս գալ տներից, քանզի նրանց սպանում են: Այս շրջանում առևտուրը լիովին կազմալուծվել է, աղքատությունը գնալով ավելի է սրվում:

Կարծում էինք, որ արհավիրքը կվերաբերի միայն հայերին, սակայն տուժում են նաև օտարերկրացիները: Մեր հայրենակիցներից շատերը ևս ծանր կորուստներ են ունեցել: Մեր տեղի արքայական գրասենյակի երկու թարգմանիչները՝ Արմանդո Կոուսսան և Հոմսին, Ադանայի հրդեհի ժամանակ կորցրել են ավելի քան 130 հազար ֆրանկի կարողություն:

Բոլոր այն մարդիկ, ովքեր խիղճ ունեն, մտածում են մեղմել այս թշվառների վիճակը: Ամենուր գրասենյակներ են բացվում այս ահավոր արհավիրքի վնասները մեղմելու համար: Անգլիան և Ֆրանսիան շատ առատաձեռն են, Գերմանիան ևս շատ բան է անում:

Մերսինի և Ալեքսանդրիայի մեր գրասենյակներում շատ ընտանիքներ ապաստան և սնունդ են ստանում: Արքայական փոխհյուպատոս Սոլան դարձել է շատ դժբախտների պահապանը».[14]

Տեղի ունեցած կոտորածների և դրանցում կանոնավոր զորքերի մասնակցության մասին է վկայում Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Իմպերիալիի կողմից մայիսի 21-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին ուղարկած հեռագիրը. *«...Ֆրանսիացի իմ գործընկերը, որ մանրամասն [տեղեկություններ] է ստացել իր հյուպատոսներից և ռազմանավերից, վստահեցնում է, որ շատ վայրերում կոտորածներն, իրոք, ահավոր բնույթ են կրել: Հանգամանքները ծանրացնում և օսմանյան կառավարության*

14 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2641:

պատասխանատվությունը մեծացնում է նաև այն հանգամանքը, որ կարգ ու կանոնը վերականգնելու համար Ադրիանապոլսից ուղարկված զորքը, տեղ հասնելուն պես միացել է կոտորածներն իրականացնողներին: Կարելի է ասել, որ քրիստոնյաների պարբերական կոտորածներն իրենց գագաթնակետին են հասնում, երբ տեղ են հասնում ջարդերը կասեցնելու համար ուղարկված զորքերը ...»: [15]

Որքան էլ երիտթուրքական կառավարությունն ազատորեն և հետևողականորեն իրականացնում էր իր առջև դրած ծրագրերը, այնուամենայնիվ, եվրոպական երկրների ճնշումներից խուսափելու համար փորձում էր կոտորածների ողջ պատասխանատվությունը բարդել նախկին՝ աբդուլհամիդյան վարչակարգի վրա: Դրա մասին է վկայում նաև Իտալիայի դեսպան Իմպերիալին արտաքին գործերի նախարար Տիտտոնիին ուղարկած հուլիսի 9-ի իր հեռագրում. *«... Երբ Ադանայի կոտորածներն ավարտվեցին և զորքը մտավ Կոստանդնուպոլիս, այստեղ ամեն ինչ անում են, որպեսզի կարծիք ձևավորվի, որ կոտորածներում պետք է տեսնել Աբդուլ Համիդի մեղսակցությունը: ...*

Չպետք է մոռանալ, որ Ադանայի կոտորածների պատճառները չպետք է փնտրել նախկին վարչակարգի, կամ որևէ պաշտոնյայի հրահրումների մեջ: Դրա պատճառն այն զայրույթն է, որով թուրք բնակչությունը վերաբերվում էր հայերին, որոնք սահմանադրության ընդունումից հետո հանդգնում էին խոսել, գործել և ծրագրեր կազմել մահմեդականներին հավասարի պես: Անցյալ ապրիլին տեղի ունեցած կոտորածներն անմիջապես հօդս ցնդեցրին քրիստոնյաների այն պատրանքները, որոնք նրանց էին տրվել սահմանադրության ընդունումով:...»:[16]

Նույն հեռագրում դեսպանն անդրադառնում է նաև Ադանա ուղարկված պատգամավորական հետաքննական հանձնաժողովին, որի կազմում է եղել նաև հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանը: Դեսպանը գրում է. *«...Թեկուզ հենց պատմական տեսանկյունից շատ կարևոր է այն հանգամանքը, որ ներկա խորհրդարանից մի պատգամավոր, այն էլ հայ, ուղարկվեց Ադանա՝ իրավիճակին ծանոթանալու համար: Աբդուլ Համիդի հանդեպ ունեցած այդ պատգամավորի ատելությունը բացատրելի է, բայց նա, տեսնելով իրավիճակը, ստիպված էր հայտարարել, որ դրանցում աբդուլհամիդյան մեղավորության և պատասխանատվության ոչ մի հետք չկա:*

Ինչ վերաբերում է ներկային և ապագային, պետք է նշել, որ պատգամավոր Պապիկյանը նոր արհավիրքներ է կանխատեսում, քանզի այդ շրջանում թուրքական իշխանությունները՝ լինեն դրանք քաղաքական, թե ռազմական, հավասարություն չեն պատկերացնում: Այսինքն, թե՛ պաշտոնյա, թե՛ հասարակ թուրքերը չեն կարող ընդունել այն, որ հայերն իրենց հավասար են:...»:[17]

Կոտորածների իրական մեղավորներին թաքցնելուն ուղղված երիտթուրքական կառավարության հերթական քայլը ռազմական դատարանների ստեղծումն ու ուղարկումն էր դեպքի վայրեր: Այս դատարանների իրական դերի և գործունեության մասին ուշագրավ տեղեկություններ ենք կարդում Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեուրեգարդի՝ հուլիսի 15-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտտոնիին ուղարկած հեռագրում. *«...Ինչպես արդեն տեղեկացրել եմ իմ նախորդ հաղորդագրություններում, այսօրվա թուրքն ու երեկվանը՝ 1896 թվականինը, ցանկանում է ատելության իր ողջ մեղքը բարդել բացառապես քրիստոնյաների և, հատկապես, հայ ժողովրդի վրա, քանզի նրանք*

15 ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք Բ, 1891-1916թթ. թղթապանակ 332:
16 ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք Բ, 1891-1916թթ. թղթապանակ 332:
17 Տես նույնը:

անպաշտպան են և հեշտ է նրանց մեղադրել:

Ադանայում և այլ քաղաքներում վերջին կոտորածների իրական մեղավորներին չեն անհանգստացնում, քանզի պետք է մեղադրվեր ողջ քաղաքացիական և զինվորական իշխանությունը: ...Եթե ռազմական դատարանը դեռևս ավարտված չի համարում իր նողկալի գործը և միջոցներ ձեռք չի առնում, որպեսզի ազատ արձակվեն շատ անմեղ բանտարկյալներ, որոնք պարզապես կտտանքների են ենթարկվում ու սպանվում, ապա, չնայած բոլոր հնչած գեղեցիկ խոստումներին, տեղի քրիստոնյա բնակչությանը հալածանք է սպասվում:

Այս ամբողջ շրջանում՝ Հալեպում և Ադանայում, մահմեդական բնակչությունը չափազանց կատաղած է, որովհետև Անգլիայի հյուպատոսը հրաժարվում է թուրքական դատարանին հանձնել իր մոտ ապաստանած չորս հայերին և հայտարարել է, որ նրանց կդատի միայն անգլիական դատարանը՝ այդպիսով ցույց տալով իր վերաբերմունքը թուրքական դատարանի հանդեպ:

Մի քանի օր առաջ Անտիոքում ձերբակալվեցին հայերի կոտորածների կազմակերպիչներն ու իրագործողները, որոնք բոլորին քաջ հայտնի էին: Ռազմական դատարանն անմիջապես լրատվական միջոցներով հայտարարեց, որ Եվրոպան արդարություն է ուզում, սակայն, շուտով ազատ արձակելով ձերբակալվածներին, հայտարարեց, որ նրանք մեղավոր չէին: Ամբողջ մահմեդական աշխարհում գոհունակությամբ են նշում կոտորածների հիանալի կազմակերպված լինելու հանգամանքը, քանզի դրանց արդյունքում ոչ մի մահմեդական ոչ միայն չսպանվեց, այլ նույնիսկ չվիրավորվեց:

Մարաշում արդեն հինգ շաբաթ է, ինչ ռազմական դատարանն իր նիստերը սկսում է նշանավոր մարդկանց ձերբակալությամբ և ստիպում, որպեսզի ժողովուրդը զենքը վայր դնի: Այնուհետև, ազատելով ձերբակալվածների մի մասին, դատապարտում է ուրիշներին: Խոսքը քրիստոնյա նշանավոր մարդկանց մասին է և ոչ թե մահմեդականների:

Տեղի բանտերում են գտնվում հայ հոգևորականներ, բողոքականներ, դպրոցի դասատուներ և այլք, որոնցից կտտանքների միջոցով փորձում են խոստովանություն ձեռք բերել, որ անդամակցել են իրականում գոյություն չունեցող կոմիտեներին:

Շատերը բանտ են նետվում և բռնությունների ենթարկվում: Նրանցից պահանջում են ասել, թե ո՞վ է զենք բերում Մարաշ: Սահմանադրության ընդունումից հետո, սակայն, զենքի առևտուրը ազատ է:

Մյուս քաղաքները խնդրում են, որպեսզի այդ արյունարբու դատարանը չմտնի իրենց քաղաքները, չնայած, որ իրենց մոտ էլ են տեղի ունեցել քրիստոնյաների կոտորածներ: Այժմ բնակչությանը զինաթափելու և նրանց գլխավորներին դատապարտելու համար այդ դատարանը մեկնում է Զեյթուն, ուր դեռևս 9 հազար հայ կա:

Բոլոր քրիստոնյաները սարսափում են, քանզի անցյալի հիշողությունից զատ, նրանց աչքի առաջ է նաև ներկան: Նրանք ասում են, որ նշանավորներին վերացնելուց և բնակչությանը զինաթափելուց հետո սկսվում է կոտորածը: Մահմեդականներն էլ, ոգևորվելով իրենց հաջողությունից, առավել բացահայտ են ցուցադրում իրենց ատելությունը քրիստոնյաների նկատմամբ, որից էլ քաղաքի և, հատկապես, գյուղերի քրիստոնյա բնակչությունն ուղղակի սարսափում է»:[18]

Ինչպես տեսանք, Օսմանյան կայսրությունում գտնվող իտալացի դիվանագետները բավական ակտիվորեն արձագանքել են տեղի ունեցող իրադարձություններին: Փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ հեռագրերն ու նամակներն ավելի շատ են եղել, որոնք, ցավոք, չեն պահպանվել: Այդուհանդերձ, կարծում ենք, որ հիշյալ վավերագրերն էականորեն կլրացնեն մեր գիտելիքներն ու տվյալները կիլիկյան իրադարձությունների վերաբերյալ:

18 ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P, 1891-1916 թթ. թղթապանակ 332:

Aramayis Baloyan

The Italian Diplomatic Documents on the 1909 Massacres of Armenians in Cilicia

Summary

The Italian diplomats, who eyewitnessed the massacres of the Armenian population in the provinces of Adana and Aleppo in April of 1909, have passed very notable information to the Italian government. In their telegrams and diplomatic dispatches they have clearly emphasized the fact that the Armenian massacres had been organized and implemented by the Young Turkish government. These documents mostly unknown to the researchers until recently. Now by putting these documents into circulation, we're sure that they will strongly contribute to the comprehensive study of the problem.